ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2010 թվականի N 984-Ա

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետի՝

Հաստատել հայագիտության հարցերով խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2010 թ. նոյեմբերի 18
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2010 թ.
նոյեմբերի 18-ի N 984-Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում հայագիտական աշխատանքները համակարգելու, հայագիտության ասպարեզում նկատվող տեղաշարժերը ժամանակին արձանագրելու և կանոնակարգելու, նրա արդյունավետ և հեռանկարային զարգացման օրինաչափությունները նախանշելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետին կից որպես խորհրդակցական մարմին գործում է հայագիտության հարցերով խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ):

2. Խորհուրդը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հրամանով:

3. Խորհուրդը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Խորհուրդն իր նպատակների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) մշակում է ժամանակակից հայագիտության հիմնական սկզբունքները.

2) ընդունում է համապատասխան որոշումներ.

3) քննարկում է ժամանակակից հայագիտության խնդիրները.

4) ստեղծում է հայագիտության տարբեր ճյուղերը ներկայացնող ռազմավարական հեռահար ծրագրեր.

5) մշակում է հայեցակարգ՝ հայագիտության զարգացման 2010-2025 թվականներին ընկած ժամանակահատվածի համար.

6) հայրենիք-սփյուռք հարաբերություններում հայագիտության գերակա դերի և նշանակության հարցի քննարկում և առաջարկությունների ներկայացում.

7) նախարարություններին, գերատեսչություններին, գիտական հիմնարկներին, բարձրագույն ուսումնական հաստատություններին կից ստեղծում է հայագիտական ճյուղային հանձնախմբեր և համակարգում է դրանց աշխատանքը:

III. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Խորհրդի կազմը բաղկացած է 26 անդամից:

6. Խորհրդի անդամ կարող են դառնալ ինչպես հումանիտար, այնպես էլ ճշգրիտ գիտությունների բնագավառների վաստակաշատ գիտնականներ, նախարարներ, անվանի մտավորականներ:

7. Խորհրդի կազմը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջադրմամբ:

8. Խորհրդի կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հրամանով:

9. Խորհրդի կազմը բաղկացած է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և անդամներից:

10. Խորհրդի կազմից նրա անդամների ձայների 2/3-ով բաց քվեարկությամբ ընտրվում են խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար:

11. Խորհրդի անդամներից ստեղծվում են աշխատանքային խմբեր:

12. Մեկ տարվա ընթացքում 2 անգամ անհարգելի բացակայության դեպքում խորհրդի անդամն ազատվում է խորհրդի կազմից՝ խորհրդի որոշմամբ:

13. Խորհրդի կազմը համալրվում է մեկամսյա ժամկետում՝ խորհրդի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի հրամանով:

IV. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Հայաստանի Հանրապետության վարչապետը՝

1) կազմակերպում, վերակազմակերպում և դադարեցնում է խորհրդի գործունեությունը.

2) հաստատում է խորհրդի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.

3) հաստատում է խորհրդի որոշումները:

V. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

15. Խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում և համակարգում է խորհրդի աշխատանքները.

2) վարում է խորհրդի նիստերը.

3) տարեկան մեկ անգամ գրավոր հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին:

VI. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԸ

16. Խորհրդի նախագահի տեղակալը՝

1) խորհրդի նախագահի հանձնարարությամբ համակարգում և ծրագրում է խորհրդի ընթացիկ և հեռանկարային աշխատանքները.

2) խորհրդի նախագահի պարտականությունների կատարման ժամանակավոր անհնարինության դեպքում փոխարինում է խորհրդի նախագահին:

VII. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

17. Խորհրդի քարտուղարը՝

1) նախապատրաստում և կազմակերպում է խորհրդի նիստերը.

2) վարում է նիստերի արձանագրությունները:

VIII. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ

18. Խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:

19. Նիստը գումարվում է խորհրդի կազմի առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:

20. Խորհրդի նախագահի հայեցողությամբ կամ խորհրդի անդամների մեծամասնության պահանջով, ըստ անհրաժեշտության, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

IX. ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

21. Խորհուրդը որոշումներն ընդունում է բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների 2/3-ով:

22. Խորհրդի կանոնադրության փոփոխման, ինչպես նաև խորհրդի անդամի գործունեության դադարեցման և նոր անդամի ընտրության մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների 2/3-ով:

23. Խորհուրդն անհրաժեշտության դեպքում առանձին գիտաճյուղերին առնչվող նախագծերը նախապես քննարկման է դնում համապատասխան ճյուղային հանձնախմբերում, որից հետո միայն ընդունում է վերջնական որոշում:

24. Խորհրդի որոշումները հրապարակվում են ինչպես մամուլում, այնպես էլ առանձին տեղեկատուներում, ժողովածուներում և պաշտոնական տեղեկագրերում:

X. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԸ

25. Հայագիտական ճյուղային հանձնախմբերն ստեղծում է խորհուրդը:

26. Հայագիտական ճյուղային հանձնախմբերը ձևավորվում են գիտության տարբեր բնագավառներից՝ դրանք համալրելով հայագիտության խնդիրների նկատմամբ գործնական հետաքրքրություններ ունեցող մասնագետներով:

27. Խորհրդի աշխատանքներին անհրաժեշտության դեպքում ներգրավվում են տարբեր հիմնարկների, ուսումնական, գիտահետազոտական հաստատությունների և արտադրության համապատասխան մասնագետներ:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**